ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

+ ԳԷՈՐԳ ԵՒԱՆԳՈՒԼԵԱՆՑ

Ամսոյս 16-ին, երեկոյեան 9 ժամին, անակնկալ մահով վախճանուեց Թիֆլիսի քաղաքագլուխ և Կովկասի հայութեան ընտրելագոյն անդամներից մէկը՝ Գէորգ Գրիգորեան Եւանգուլեանց։

Հանգուցեալը օժտուած էր այնպիսի բազմակողմանի բարեմասնութիւններով, նորա գործունէութիւնը այնքան ընդարձակ տարածութիւն ունէր թէ հասարակական և թէ ազգային գործերում, որ նորա մահը խոր սգով համակեց գրեթէ ամբողջ՝ թէ հայ և թէ օտարազգի հասարակութիւնը և մի անփոխարինելի կորուստ եղաւ ամենքի համար։

Թուել այստեղ մի առ մի հանգուցեալի գործունէութիւնը մենք անկարող ենք մեծ կորուստի ճնշող տպաւորութեան տակ, այդ պարտականութիւնը մենք կը-վճարենք «Լումայի առաջիկայ համարում կարելին ընդարձակ կերպով, այսօր կբաւականանանք լիշելով միայն, որ այդ բազմարդիւն և անօրինակ կեանքի կորուստը հաւասարապէս ողբացին ամեն աստիճանի և դաւանութեան անձինք։ Կատարուեց մի այնպիսի թաղում, որ վաղուց տեսնուած չէ Թիֆլիսում, պետական, քաղաքային և ազգային նշանաւոր անձանց, զանազան հաստատութիւնների ներկայացուցիչների, դպրոցական ամբողջ կազմութեանց, բազմաթիւ հոգևորականների, աստնաֆների ու անհամար բազմութեան ներկայութեամբ։

Բազմաթիւ արծաթէ և թարմ ծաղկանց պսակներ զարդարում էին հանգուցեալի դիակառքը։ Հանգուցեալը թաղուեց Խօջիվանքի գերեզմանատանը իւր ամուսնու կողքին։

Յաւիտենական հանգիստ ազնիւ գործչի ոսկրներին։

ՂՈՒԿԱՍԵԱՆ ՄՐՑԱՆԱԿԱՐԱԶԽՈՒԹԻՒՆ

«Լումայի անցեալ համարներից յայտնի է մեր ընթերցողներին, որ պ. Աւետիս Ղուկասեանը, որը յայտնի է իւր զանազան բարեգործութիւններով և իւր ծախքով կառուցել է Թիֆլիզի Վանաց ս. եկեղեցու գաւթում եկեղեցական—պատմական թանգարանի համար մի շինութիւն, գրաւոր յայտնել էր Ազգիս Վեհափառ Կաթուղիկոսին հաստատել մի մնայուն վարչութիւն թանգարանի համար, որին իւր կտակով յանձնելու է մի քանի բարենպատակ և կարևոր կարգադրութիւններ։

Ցանկալով թանգարանի բացումը նշանաւորել մի որ և է արժանայիշատակ գործով, պ. Ղուկասեանը այդ կարևոր կարգադրութիւններից մէկը իրեն յատուկ պատրաստակամութեամբ որոշեց գործադրել այժմէն իսկ և այդ մասին տարւոյս յունիսի 6-ին հետևեալ պաշտօնական յայտարարութիւնը ներկայացրեց Հայաստանեայց Եկեղեցու Նուիրապետին.

«Այն յայտարարութեան մէջ, որ ես մատուցի Վեհ.
« հափառութեանդ իմ կառուցած եկեղեցական թան-
« գարանի համար մշտական վարչութիւն նշանակելու,
« լիշել էի որ ես իմ կտակով յանձնելու եմ այդ վար-
« չութեան մի քանի այլ բարենպատակ կարգադրու-
« թիւններ ի կատար ածելու։

« Այդ կարգադրութիւններից մէկն էլ այն է, որ